ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» ապրիլի 2014թ. N 98-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԼՈՌՈՒ, ՇԻՐԱԿԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻՆ ՄԿՆԱՍՊԱՆ ԹՈՒՆԱՆՅՈՒԹ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից 2014 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Հայաստանի Հանրապետության մարզերի բարձրադիր գոտիներում կատարված մոնիթորինգի արդյունքները՝ մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2014 թվականի գարնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերին հատկացվող ցինկի ֆոսֆիդ մկնասպան թունանյութի բաշխացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ավագյանին՝

1) ապահովել ցինկի ֆոսֆիդ մկնասպան թունանյութի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության Լոռու, Սյունիքի, Տավուշի մարզկենտրոններ և անհատույց հանձնումը մարզպետարանների կողմից լիազորված անձանց՝ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված չափաքանակներով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված ցինկի ֆոսֆիդ մկնասպան թունանյութի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալներ Ս. Գալստյանին և Ռ. Մակարյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ / Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գուղատնտեսության նախարարի
2014 թվականի ապրիլ -----ի N --Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԼՈՌՈՒ, ՇԻՐԱԿԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՑԻՆԿԻ ՖՈՍՖԻԴ ՄԿՆԱՍՊԱՆ ԹՈՒՆԱՆՅՈՒԹԻ

Մարզը	Տարածությունը (հա)	Թունանյութի քանակը (կգ)
Արագածոտն	1886	226.32
Լոռի	1538	184.56
Շիրակ	3524	422.88
Սյունիք	1565	187.8
Ընդամենը	**8513**	**1021.56**